սումն և զպատահար. զսով, զսուր, զգերութիւն, զմահտարաժամ, զթրթուր, զդալուկ, զժանգ, զմարախ, զկարկուտ, զկայծակն, զերաշտութիւն և զամենայն պատիժ պատուհասի՝ որ գան ի վերա աշխարհի վասն մեղաց։ Այլ և աւրհնեսցէ զձեզ Քրիստոս Աստուած մեր. տացէ ձեզ շինութիւն, անդորրութիւն և խաղաղութիւն. բուսոց և տնկոց ձերոց և ամենայն անդէոց առողջութիւն և քաջ պտղաբերութիւն տացէ, և ամենայն բարեաց լիութիւն և առատութիւն։ Արասցէ և զբանաւոր երկիրդ ձեր գործնականս և արդիւնականս։ Ամէն։

Շնորհեցաք և ի ձեռս դորա ձեզ պատուական պարգև հոգևորական զեղն սուրբ աւծութեան, զաստուածունակ և զսրբալոյս սուրբ մեռոնն, զոր Հոգին Սուրբ արասցէ ի լուսաւորութիւն նորածնելոցն սուրբ աւազանաւն՝ յորդեգրութիւն Հաւրն երկնաւորի և ժառանգակցութիւն Քրիստոսի, ի յաւծումն քահանայից՝ և նորոգումն սուրբ եկեղեցւոյ, զնոյն ի ճակատ հաստատութեան։ Եւ յամենայն ամի նոր առցէ, և զհինն ի նոր խառնեսցէ։ Ամէն։ Գրեցաւ գիր աւրհնութեան հրամանիս մերոյ....[1]

1. Պակասի ի բնագրին վերջն, որով և թուականն և ստորագրութիւն անուանն։